Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալված բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի՝ Արմեն Մանուկի Մովսիսյանի անվամբ Շիրակի մարզ, համայնք Գյումրի ք. Անի թաղամաս, 13-րդ փողոց շենք 6գ 12 բնակարան, Մուշ-2 թաղամաս 10-2ե շենք 9 բնակարան հասցեներով անշարժ գույքի միավորների նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 3-րդ կետը՝ վարչական մարմինը քաղաքացի՝ Մանուկ Ռազմիկի Մովսիսյանի դիմումը բավարարեց մասամբ:

3.ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ, 54-րդ հոդվածի 1-ին մասի, 55-րդ, 56-րդ, 57-րդ հոդվածի 1-ին մասի, 58-րդ հոդվածի 1-ին մասի, 59-րդ, 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Գյումրի ք. Ա. Խաչատրյան 31 շենք № 88 հասցեի 103.3 (մեկ հարյուր երեք ամբողջ երեք տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

- | | |
|-------------------------------|-----------------------|
| 1) Մանուկ Ռազմիկի Մովսիսյանին | ծնված՝ 1961 թվականին, |
| 2) Լեյլի Արմենակի Մովսիսյանին | ծնված՝ 1957 թվականին, |
| 3) Կարեն Մանուկի Մովսիսյանին | ծնված՝ 1983 թվականին, |
| 4) Մարգո Մանուկի Մովսիսյանին | ծնված՝ 1984 թվականին, |
| 5) Մովսես Մանուկի Մովսիսյանին | ծնված՝ 1986 թվականին |

որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Մանուկ Ռազմիկի Մովսիսյանին, Լեյլի Արմենակի Մովսիսյանին, Կարեն Մանուկի Մովսիսյանի, Մարգո Մանուկի Մովսիսյանին, Մովսես Մանուկի Մովսիսյանին:
3. Քաղաքացիներ՝ Մանուկ Ռազմիկի Մովսիսյանին, Լեյլի Արմենակի Մովսիսյանին, Կարեն Մանուկի Մովսիսյանի, Մարգո Մանուկի Մովսիսյանին, Մովսես Մանուկի Մովսիսյանին, իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Մանուկ Ռազմիկի Մովսիսյանին, Լեյլի Արմենակի Մովսիսյանին, Կարեն Մանուկի Մովսիսյանի, Մարգո Մանուկի Մովսիսյանին, Մովսես Մանուկի Մովսիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի

համայնքի ղեկավար՝

2025 թվական ք. Գյումրի



miD

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00 ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » Շրջաբ 2025 թվականի N 946 - Ա

**ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՆՎԵՐ ՍԱՄՎԵԼԻ ԱՍԱՏՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ԼԻԼԻԹ
ՄԱՔՍԻՄԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ԱՐՍԵՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ, ՀԱՍՄԻԿ ՆՎԵՐԻ
ԱՍԱՏՐՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՆՎԵՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ, ԶՈՒԼԻԵՏԱ ՆՎԵՐԻ
ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ՍԱՐԳԻՍ ՆՎԵՐԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ
6-Ի N 1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Լիլիթ Մաքսիմի Ասատրյանը (անձնագիր՝ AT0613027, տրված՝ 17.12.2020թվականին 064-ի կողմից, հաշվառված ք.Գյումրի Ղանդիլյան փողոց 47 շենք, №23 հասցեի բնակարանում) 2025թվականի ապրիլի 7-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ խնդրելով իրեն, ամուսնու հորը՝ Սամվել Արսենի Ասատրյանին և իր երեխաներին՝ Հասմիկ Նվերի Ասատրյանին, Սուսաննա Նվերի Ասատրյանին, Զուլիետա Նվերի Ասատրյանին և Սարգիս Նվերի Ասատրյանին (6 անձ) սահմանված կարգով, որպես զոհված զինծառայող Նվեր Սամվելի Ասատրյանի ընտանիքի անդամներ բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ճանաչելու և հաշվառման վերցնելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում:

Դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության 2021թվականի հունիսի 14-ի №36/3685, №36/3686, №36/3687, №36/3688, №36/3689, №36/3690 տեղեկանքների պատճենները, Նվեր Սամվելի Ասատրյանի մահվան մասին պետական վկայականի պատճենը, Լիլիթ Մաքսիմի Ասատրյանի, Սամվել Արսենի Ասատրյանի, Հասմիկ Նվերի Ասատրյանի, Սուսաննա Նվերի

Ասատրյանի, Ջուլիետա Նվերի Ասատրյանի և Սարգիս Նվերի Ասատրյանի անձնագրերի, ամուսնության վկայականների, նույնականացման քարտերի պատճենները, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 14.01.2025թվականի №25065065013, №25065065014, №25065065015, №25065065016 №25065065017, №25065065018 և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 30.01.2025թվականի №206 տեղեկանքները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ 2025թվականի ապրիլի 7-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի մայիսի 20-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ Լիլիթ Մաքսիմի Ասատրյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1.Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Լիլիթ Մաքսիմի Ասատրյանի ամուսինը՝ Նվեր Սամվելի Ասատրյանը զոհվել է 02.10.2020թվականին մարտական գործողությունների ժամանակ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության 14.06.2021թվականի, №36/3685, №36/3686, №36/3687, №36/3688, №36/3689, №36/3690 տեղեկանքներ և 22.02.2021 թվականին տրված ԲԱ363331 պետական վկայական մահվան մասին):

բ) Լիլիթ Մաքսիմի Ասատրյանը, Սամվել Արսենի Ասատրյան, Հասմիկ Նվերի Ասատրյանը, Սուսաննա Նվերի Ասատրյանը, Ջուլիետա Նվերի Ասատրյանը և Սարգիս Նվերի Ասատրյանը 08.11.2019 թվականից հաշվառված բնակվում են ք.Գյումրի Ղանդիլյան փողոց 47 շենք, №23 հասցեի բնակարանում (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 14.01.2025 թվականի №25065065013, №25065065014, №25065065015, №25065065016 №25065065017, №25065065018 և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 30.01.2025 թվականի №206 տեղեկանքներ):

գ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018թվականի դեկտեմբերի 20-ի №212-Ա որոշմամբ Գյումրի համայնքի Ղանդիլյան փողոց 47 շենք, №23 հասցեի սոցիալական բնակարանը անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել է Լիլիթ Մաքսիմի Ասատրյանի 7 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, ամուսնուն՝ Նվեր Սամվելի Ասատրյանին(զոհված 02.10.2020 թվականին), ամուսնու հորը՝ Սամվել Արսենի Ասատրյանին և իր երեխաներին՝ Հասմիկ Նվերի Ասատրյանին, Սուսաննա Նվերի Ասատրյանին,

Ջուլիետա Նվերի Ասատրյանին և Սարգիս Նվերի Ասատրյանին, որպես Գյումրու համայնքապետարանում հաշվառված, սոցիալական բնակարանների ծրագրում ընդգրկված և շահառու ճանաչված անձանց:

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Լիլիթ Մաքսիմի Ասատրյանի, Սամվել Արսենի Ասատրյանի, Հասմիկ Նվերի Ասատրյանի, Սուսաննա Նվերի Ասատրյանի, Ջուլիետա Նվերի Ասատրյանի և Սարգիս Նվերի Ասատրյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև 1998թվականի մարտի 1-ից առ այսօր Հայաստանի Հանրապետության տարածքում վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ(հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 20/01/ 2025 թվականին №ԱՏ-20012025-99-1161 և 27/01/2025 թվականի №ԱՏ-27012025-99-0944 տեղեկանքներ):

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1419-Ն որոշման դրույթներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1.Զոհված զինծառայող Նվեր Սամվելի Ասատրյանի ընտանիքին վերցնել հաշվառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին»

N 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում.

- 1) Լիլիթ Մաքսիմի Ասատրյանին (կինը), ծնված՝ 1984թվականին,
- 2) Սամվել Արսենի Ասատրյանին (հայրը), ծնված՝ 1959թվականին,
- 3) Հասմիկ Նվերի Ասատրյանին (աղջիկը), ծնված՝ 2011թվականին,
- 4) Սուսաննա Նվերի Ասատրյանին (աղջիկը), ծնված՝ 2012թվականին,

- 5) Զուլիետա Նվերի Ասատրյանին (աղջիկը), ծնված՝ 2014թվականին,
6) Սարգիս Նվերի Ասատրյանին (տղան), ծնված՝ 2016թվականին

2.Քաղաքացիներ Լիլիթ Մաքսիմի Ասատրյանին, Սամվել Արսենի Ասատրյանին, Հասմիկ Նվերի Ասատրյանին, Սուսաննա Նվերի Ասատրյանին, Զուլիետա Նվերի Ասատրյանին և Սարգիս Նվերի Ասատրյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Լիլիթ Մաքսիմի Ասատրյանին, Սամվել Արսենի Ասատրյանին, Հասմիկ Նվերի Ասատրյանին, Սուսաննա Նվերի Ասատրյանին, Զուլիետա Նվերի Ասատրյանին և Սարգիս Նվերի Ասատրյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



[Handwritten signature]

2025-05-23 12:17:55 GAT-4
Հավաստված է էԿԵՆԳԻ կողմից

milD

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. Բ.Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00 ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » Տեպտեմբեր 2025 թվականի N 943-Ա

**ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ԱՐՄԵՆ ԳԱԳԻԿԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝
ԳԱԳԻԿ ԶԻՎԱՆՇԻՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԹԱՄԱՐԱ ՀԱՄԼԵՏԻ
ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի N 1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՑՈՒՑԱԿՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Թամարա Համլետի Մաթևոսյանը (անձնագիր՝ AS0617183, տրված՝ 17.05.2019 թվականին 016-ի կողմից, հաշվառված ք.Գյումրի 205/458 համարակալմամբ տնակում) 2025 թվականի մարտի 6-ին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ խնդրելով իրեն և իր ամուսնուն՝ Գագիկ Զիվանշիրի Մաթևոսյանին (2անձ) սահմանված կարգով, որպես զոհված զինծառայող Արմեն Գագիկի Մաթևոսյանի ընտանիքի անդամ բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ճանաչելու և հաշվառման վերցնելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում:

Դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության 2022 թվականի փետրվարի 22-ի N 11/6, N 11/7 տեղեկանքների պատճենները, Արմեն Գագիկի Մաթևոսյանի մահվան մասին պետական վկայականի պատճենը, Թամարա Համլետի Մաթևոսյանի և Գագիկ Զիվանշիրի Մաթևոսյանի անձնագրերի, ամուսնության վկայականի պատճենը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 13.02.2025 թվականի N 250169016027 և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 03.02.2025 թվականի N 227 տեղեկանքները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ

հողվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝ 2025 թվականի մարտի 6-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2025 թվականի մայիսի 20-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ Թամարա Համլետի Մաթևոսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Թամարա Համլետի Մաթևոսյանի որդին՝ Արմեն Գագիկի Մաթևոսյանը զոհվել է 11.10.2020 թվականին ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության 22.02.2022 թվականի №11/6, №11/7 տեղեկանքներ և 21.10.2020 թվականին տրված ԲԱ307300 պետական վկայական մահվան մասին):

բ) Թամարա Համլետի Մաթևոսյանը և ամուսինը՝ Գագիկ Զիվանշիրի Մաթևոսյանը 12.12.2008 թվականից հաշվառված բնակվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի №205/458 համարակալմամբ տնակում (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 13.02.2025 թվականի №250169016027 և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 03.02.2025 թվականի №227 տեղեկանքներ):

գ) Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Թամարա Համլետի Մաթևոսյանի և Գագիկ Զիվանշիրի Մաթևոսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, ինչպես նաև 1998 թվականի մարտի 1-ից առ այսօր Հայաստանի Հանրապետության տարածքում վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 07/02/2025 թվականի №ԱՏ-07022025-99-1353 և 11/02/2025 թվականի №ԱՏ-11022025-99-0419 տեղեկանքներ):

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների

բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1419-Ն որոշման դրույթներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Զոհված զինծառայող Արմեն Գագիկի Մաթևոսյանի ընտանիքին վերցնել հաշվառման Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ուղղորդված խմբերի՝ ֆունկցիոնալության խորր կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» N 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում.

- 1) Գագիկ Զիվանշիրի Մաթևոսյանին (հայրը), ծնված՝ 1969թվականին,
- 2) Թամարա Համլետի Մաթևոսյանին (մայրը), ծնված՝ 1973թվականին

2. Քաղաքացիներ Գագիկ Զիվանշիրի Մաթևոսյանին և Թամարա Համլետի Մաթևոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Գագիկ Զիվանշիրի Մաթևոսյանին և Թամարա Համլետի Մաթևոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ



[Handwritten signature]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2025-05-23 12:21:04 GMT+4
Հավաստված է էԿԵՆԳԻ կողմից

miD

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. Բ. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 26 » Տպիսբ 2025 թվականի № 942Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՕԼԵԳ ԿՈՇԵՎՈՅԻ ՓՈՂՈՑ 2Գ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №1119114) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Լորաննա Գրիգորյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №6488 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օլեգ Կոշևոյի փողոց 2Գ բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №1119114) վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Օ. Կոշևոյի փողոց, 2/3 բնակելի տուն

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ



mlD

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» «Մայիս» 2025 ԹՎԱԿԱՆԻ N 941 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 29-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԲՆԱԿՖՈՆԴԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» N 627 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի՝ Լևոն Սերգեյի Ավակյանը (անձնագիր՝ 60 13 532376, տրված՝ 2014 թվականի փետրվարի 13-ին, 610-013-ի կողմից) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակֆոնդի սեփականաշնորհման մասին» N 627 որոշման մեջ (այսուհետ՝ որոշում) փոփոխություններ կատարելու խնդրանքով:

Որոշման մեջ տեղի են ունեցել վրիպակներ՝ մասնավորապես որոշման 684-րդ կետի 1-ին ենթակետում Ավագյան Սերգեյ Հրանտի ազգանունը «Ավակյան»-ի փոխարեն գրվել է «Ավագյան» (հիմք՝ մահվան վկայական թիվ 170239260002900422006, տրված՝ 2023 թվականի հունիսի 03-ին, 92600029-ի կողմից), 684-րդ կետի 3-րդ ենթակետում Ավագյան Հրանտ Սերգեյի ազգանունը «Ավակյան»-ի փոխարեն գրվել է «Ավագյան» (հիմք՝ անձնագիր՝ 90 16 220652, տրված՝ 2017 թվականի մարտի 07-ին, 150-002-ի կողմից):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով քաղաքացի՝ Լևոն Սերգեյի Ավակյանի 2025 թվականի ապրիլի 30-ի դիմումը, (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված՝ թիվ 5468 թվագրությամբ), որոշում եմ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի 1997 թվականի օգոստոսի 29-ի «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակֆոնդի սեփականաշնորհման մասին» N 627 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
 - 684-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերում «Ավագյան» բառը փոխարինել «Ավակյան» բառով:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Լևոն Սերգեյի Ավակյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ., ք. Գյումրի

2025-09-26 15:40:44 ՕրԴԿ
Հավաստված է էԼՆԼԴ-ի կողմից





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » *Տաշիթ* 2025 թվականի N 940 Ա

ԱՌԱՆՑ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՄՆԱՑԱԾ ԵՐԵՒԱ ՀԱՇՎԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվականի մայիսի 26-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստին քննարկվել է՝ 21 մայիսի 2025 թվականին ծնված նորածնին առանց ծնողական խնամքի մնացած երեխա ճանաչելու վերաբերյալ:

Անչափահասի մայրը ներկայացրել է դիմում երեխայի նկատմամբ ծնողական իրավունքներից հրաժարման (հիմք՝ դիմում կազմված 23.05.2025 թվականին Միասնական սոցիալական ծառայության Գյումրու տարածքային կենտրոնի կողմից և հաստատված «Գյումրու Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կողմից):

Ղեկավարվելով ընտանեկան օրենսգրքի 109-րդ, 110-րդ հոդվածների 1-ին մասերի, Հայաստանի Հանրապետության «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքի 2-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի մայիսի 26-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաշվառել՝ 21 մայիսի 2025 թվականին ծնված նորածնին առանց ծնողական խնամքի մնացած երեխա:
2. Երեխային տալ ազգանունը՝ Եսայան, իսկ անունը՝ Տաթև:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



miD

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 26 » Տեպրեմբեր 2025 թվականի N 939-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈՒՑՔԱՄԱՐՏԻ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ԳՅՈՒՄՐՈՒ
ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Հայաստանի Հանրապետության բնօրինակ պատանիների 2025 թվականի մայիսի 26–31–ը Երևան քաղաքում կայանալիք առաջնությանը Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով բնօրինակ ֆեդերացիայի 2025 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1-ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2025 թվականի մայիսի 26-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության բնօրինակ պատանիների առաջնությանը գործուղման ծախսերի 2025 թվականի մայիսի 26–31–ը Երևան քաղաք գործուղել 19 մարզիկի և 4 մարզիչի, գործուղման ծախսերի համար հատկացնել (միայն ճանապարհածախս) 69.000(վաթսուինը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025 թ. ք. Գյումրի



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թ.
Մայիսի 26-ի N *937-Ա* որոշման



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության բնօրգամարտի պատանիների առաջնությանը
մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզիկ/մարզիչ	Անձնագիր	Հաշվեհամար	Գումար
1.	Վարդյան	Նարեկ	Մարզիկ	AL0267589	1570084528055200	3.000
2.	Բաբլումյան	Սուրեն	Մարզիկ	AX0238192	2477403411660000	3.000
3.	Գրիգորյան	Գագիկ	Մարզիկ	AL0583631	1570012138811300	3.000
4.	Թումասյան	Աշոտ	Մարզիկ	AX0514061	1570000089510800	3.000
5.	Բաղդասարյան	Աշոտ	Մարզիկ	AX0231257	2470096098080000	3.000
6.	Ղազարյան	Բագրատ	Մարզիկ	AX0264679	1570096402424000	3.000
7.	Պապոյան	Հրաչ	Մարզիկ	AX0443665	1570098198530200	3.000
8.	Խզեյան	Հայկ	Մարզիկ	012459947	2050074973457003	3.000
9.	Մարտիրոսյան	Տիգրան	Մարզիկ	AX0218002	1570091320913200	3.000
10.	Մելքոնյան	Միհեր	Մարզիկ	AX0344379	1570001669246600	3.000
11.	Հովսեփյան	Արմեն	Մարզիկ	AV0612207	220063569457000	3.000
12.	Հարությունյան	Գրիգոր	Մարզիկ	AL0673381	1570073813288100	3.000
13.	Խաչատրյան	Հրաչ	Մարզիկ	AX0276736	1570097939590200	3.000
14.	Ալոյան	Տիգրան	Մարզիկ	AX0320274	220352265130000	3.000
15.	Թադևոսյան	Արման	Մարզիկ	AL0394981	1570032567635600	3.000
16.	Քերոբյան	Նարեկ	Մարզիկ	AV0656909	220352264737000	3.000
17.	Հակոբյան	Վահե	Մարզիկ	AL0258108	220352265437000	3.000
18.	Պետրոսյան	Արամ	Մարզիկ	AX0557764	1510007750407500	3.000
19.	Մխոյան	Հենրիկ	Մարզիկ	AL0258416	1570084124601200	3.000
20.	Ղազարյան	Կարեն	Մարզիչ	012345237	2470053131810010	3.000
21.	Խզեյան	Հովհաննես	Մարզիչ	010259604	15100958849388	3.000
22.	Բաղդասարյան	Արմեն	Մարզիչ	009225400	19300670681900	3.000
23.	Բաղդասարյան	Գարիկ	Մարզիչ	AU0394963	163005962010	3.000
Ընդամենը						69.000



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 23 >> Տպխար 2025 թվականի N 938 -Ա

**ԱՐԹՈՒՐ ՄԻՇԱՅԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ, 24-րդ կետերով, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 18-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 13-ի N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2025 թվականի մայիսի 21-ի N 01//04449-2025 գրությունը, Արթուր Միշայի Մեսրոպյանին 2025 թվականի մայիսի 23-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Արթուր Միշայի Մեսրոպյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ինքնակամ շինությունների և հողի վերահսկողության բաժնի պետի (ծածկագիր 2.1-24) ժամանակավոր պաշտոնակատար՝ 2025 թվականի մայիսի 26-ից:
2. Արթուր Միշայի Մեսրոպյանի հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր՝ 2025 թվականի մայիսի 26-ից մինչև համայնքային ծառայության նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի նշանակումը:
3. Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի՝ ամսական 286.000 (երկու հարյուր ութսունվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արթուր Միշայի Մեսրոպյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ք.Գյումրի



Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 23 >> Տպագրված 2025 թվականի N 937 -Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ
ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԻԼԻԹ
ՆՈՐԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԶՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Լիլիթ Նորիկի Մուրադյանի 2025 թվականի մայիսի 23-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի (այսուհետ՝ բաժին) պետի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Նորիկի Մուրադյանին տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 2025 թվականի մայիսի 26-ից:
2. Չվճարվող արձակուրդի տևողությունը՝ 8 օր՝ 2025 թվականի մայիսի 26-ից մինչև հունիսի 2-ը ներառյալ:
3. Չվճարվող արձակուրդի ընթացքում Լիլիթ Նորիկի Մուրադյանի ծառայողական պարտականությունների կատարումը վերապահել բաժնի պետի տեղակալ Գրետա Վոլոդյայի Զանոյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Նորիկի Մուրադյանին և Գրետա Վոլոդյայի Զանոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ք. Գյումրի



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » *Տպիկ* 2025 թվականի N *936*-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՓՈՂՈՑ N 3/5 ՀԱՍՑԵԻ 66,07 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոց 3/5 հասցեի 66,07 (վաթսուվեց ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում ներառված Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 22-ի N 124-Ա որոշմամբ հաստատված Գյումրի քաղաքի գլխավոր հատակագծի հեռանկարային զարգացման գծագրով հանդիսանում է բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամաս: Սակայն Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոց 3/5 հասցեի 66,07 (վաթսուվեց ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը պետական գրանցում է ստացել որպես՝ բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամաս (հիմք՝անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 13022025-08-0032 վկայականը): Նշված տարածքում կառուցապատում իրականացնելու նպատակով կարիք է առաջացել փոփոխել նշված հողամասի գործառնական նշանակությունը:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի փողոց 3/5 հասցեի 66,07 (վաթսուվեց ամբողջ յոթ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակությունից փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատում գործառնական նշանակության:



ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025 թ. ք. Գյումրի



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 23 » 2025 թվականի № 935Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՎՏՈԿԱՅԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 44.9 ՔԱՌԱԿՈՒՄԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0789-0016-ԻՑ) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Ավտոկայանի հրապարակի հարևանությամբ գտնվող 44.9 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0789-0016-ից) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ավտոկայանի հրապարակ, 16/2 հողամաս

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

2025 թ. ք. Գյումրի



Handwritten signature

մԻԾ

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

« 23 » *հուլիս* 2025 թվականի № 934-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, Մ. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ 21 ՇԵՆՔ, 10 ԲՆԱԿԱՐԱՆ
ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Հովհաննես Սարգսյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №5380 թվագրմամբ) ու չափազրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՒՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված շինության բաժանման սխեմաները և հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաք, Մ. Ավետիսյան փողոց 21 շենք, 10 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №26032024-08-0011) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

- 1) 42.04 քառակուսի մետր մակերեսով շինությունները հասցեավորել՝
ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Ավետիսյան փողոց, 21 շենք, 10 բնակարան
- 2) 41.50 քառակուսի մետր մակերեսով շինությունները հասցեավորել՝
ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Մ. Ավետիսյան փողոց, 21 շենք, 10/1 բնակարան

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ



Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025 թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-01; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » Տպիսի 2025 թվականի N 933 Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼՈՒՍԻՆԵ ՍՈՒԼԹԱՆՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ
(ՏԵՂԱԲԱՇԽԵԼՈՒ) ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի նոյեմբերի 12-ի N 124-Ա որոշմամբ հաստատված կանոնների դրույթներով և հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լուսինե Սուլթանյանի 2025 թվականի մայիսի 19-ին ներկայացրած հայտը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված 2025 թվականի մայիսի 19-ին 6345-2025 թվագրմամբ)՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Լուսինե Սուլթանյանին Գյումրի քաղաքի Մովսես Խորենացի 10 հասցեում տեղադրել (տեղաբաշխել) գովազդի վահանակ (լուսատախտակ) ընդհանուր 1 քմ մակերեսով:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել 2025 թվականի հունիսի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Լուսինե Սուլթանյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025-05-22 12:15:00 GMT+4
Հավաստված է էԼԵՆԱԳ-ի կողմից

miD

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. ք. Գյումրի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 23 » *Տեղաբնիկ* 2025 թվականի N 932-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ
20-Ի N 400-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի փետրվարի 20-ի «Քաղաքացիներ Աշոտ Սպարտակի (2/6 մաս), Նոնա Վլադիմիրի (1/6 մաս), Խաչատուր Զոհրաբի (1/6 մաս), Պարգեվ Խաչատուրի (1/6 մաս) եվ Աղաբեկ Խաչատուրի (1/6 մաս) Տոնյաններին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Տոլստոյի փողոց N 3 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 47.41 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները օրինական ճանաչելու եվ օրինական հողամասին կից ավել օգտագործվող 66.83 քառակուսի մետր մակերեսով հողամասի եվ նրա վրա առկա շինությունների կարգավիճակի մասին» N 400-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած վրիպակի պատճառով:
Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

